նէ առնումք, և մերձ է ժամանակ փրկութեան, և պարտ է այսմ ամենայնի կատարել, զի երևեսցին հշմարտեալքն։ Եւ ես որ խրախոյս տամ ձեզ և քաջալերեմ համբերել ամենայն իմաստութեամբ, կամաւորութեամբ մահակից և ես զտանիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց. և եթէ բանիւք և քննութեամբ էր մեզ նեղութիւնս կամ հարցափորձութեամբ, ապա պատրաստ կամք յամենայն իրս տալ պատասխանի՝ զոր ինչ և հարցանիցեն. և եթէ տանջանաւք և կամ բռնութեամբ, և ոչ յայնմանէ յուրատ կամք. և զոհանամ զԱստուծոյ յամենայն ժամ, որ մինչև ցայժմ յանաստուած հեթանոսաց զատէաք, և այժմ ի քրիստոնէիցդ նոյնպէս։ Բայց դուք մի՛ վհատիք. կարող է Աստուած ընդ փորձութեանցն և զելսն առնել. սակայն որչափ կար մեր է՝ ամենեքեան որպէս զքաջ զինվոր Քրիստոսի մարտիք զբարիոք մարտ ի վերայ ճշմարտութեան։ Վկայէ ինձ Տէր Աստուած իմ, վասն զի չեմք ի սաղլումն ինչ, և ոչ եմք ի թիւրութիւն հաւատոց, և կամ յանդգնաբար իրաւ զմեզ կարծեմք. վասն զի այդ անզգամաց է գործ և անմտաց. այլ շնորհօքն Աստուծոյ և սրբոց լուսաւորչացն, զարքունական զճշմարիտն ունիմք զճանապարհն որ ի Քրիստոս Յիսուս, և ոչ յաջ խոտորելով մեր և ոչ յահեակ, և ի պատուիրանացն Աստուծոյ ոչ օտարացեալ, և ոչ հպարտացեալ և ամբարտաւանեալք, որպէս զայլս ոմանս։ Եւ արդ եթէ խարդախութեամբ ինչ ունիմք զթերութիւն հաւատոց, վասն է՞ր չարշարիմք իբրև զպատժապարտս և ոչ ունիմք հանգիստ, այլ տագնապաւ շրջիմք ընդ ծով և ընդ ցամաք. որպէս և Պաւղոս պատմէ զինքենէ, զնեղութիւնս, զվիշտս, զչարչարանս, զհալածանս, և զայլսն ամենայն. և թէ սնոտի յուսով էր այս ամենայն շրջագայութիւնս, և զիմ հայրենի տունն ի խաղաղութեան ժամանակ թողի, և փախուստ և զնեղութիւնս և անձուկս ինձ տարապարտ է անցանել. եթէ պարսաւելի հաւատոյ[1] զայս գործեցի, և քառասուն ամ[2] իմով շրջագայութեամբ և յայս փոխեցայ, ապայ ուրեմն խաբեալ ես միայն եղէ. բայց յուսովն Աստուծոյ եմ վկայութեամբ սուրբ գրոց. վասն զի զուղղափառ և զանթերին ունիմ զհաւատն։ Արդ, ամենեքեան որ իմում հայրապետութեանս և հաւատոյս կցորդ էք, մի՛ թուլութեամբ և կամ աչառանաւք պատկառէք կամ երկնչիք, և զԱստուած վճառէք վասն սնոտի կենացս. վասն զի այս է ժամանակ ընդունելոյ և առնուլ պսակ ի Քրիստոսէ. և երաշխաւոր եմ ձեզ առ Քրիստոս. վասն զի որ սուրբ հարց զցանկն ոչ պատառէ՝ ընդ սուրբան պսակիցի. ապա թէ ոք զմարդկան փառս առաւել սիրեսցէ քան զԱստուծոյն, ի դատաստանի Որդւոյն Աստուծոյ ընդ ուրացողսն գտցի, որք զՔրիստոս Աստուած ոչ խոստովանեցան և ի մեր հաւատոյս և յօրհնութենէն անմասն ելցէ։ Իսկ հաւատացեալքն ի հաւատս մեր՝ օրհնեալ եղիցին յերկնաւորաց և յերկրաւորաց, ի մէնջ և յԱստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

1. Պէտք է ըսել, պրոՒՒՒՒ հՒՒՒՒՒ, կամ վասն պրոՒՒՒՒ հՒՒՒՒ
2. Յօրինակին խ ամ։